

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Իշխանը հովիւ կը դառնայ



Written by: Edward Hughes
Illustrated by: M. Maillot; Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Story 10 of 60


www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն


Armenian




Շուրջը նայեցաւ, որպէսզի վստահ ըլլայ, որ որեւէ մէկը չի տեսներ, Մովսէս յարձակեցաւ ծառային անխիղճ տիրոջ վրայ: Կռուի ընթացքին Մովսէս սպաննեց եգիպտացին: Անոր մարմինը շուտով թաղեցին:




Յաջորդ օրը, Մովսէս տեսաւ, որ երկու հրեաներ կը կռուին: Ան փորձեց անոնց կասեցնել: Մէկը ըսաւ. "ինձի՞ ալ պիտի մեռցնես, ինչպէս որ եգիպտացիին մեռցուցիր":



Մովսէս շատ վախցաւ: Ամէն մարդ գիտեր երեկուան մասին: Փառաւոնն ալ գիտեր: Մովսէս պետք էր, որ փախչեր: Ան Միտեայ կոչուող երկիրը գնաց:




Մինչ Մովսէս կը հանգչեր ջրհորին մօտ, Միտիակի քահանային եօթը աղջիկները դոյլերը կը լեցնէին ջուրով իրենց հօր հոտին համար:




Ուրիշ հովիւներ փորձեցին անոնց կողմ քաշել: Մովսէս պաշտպանեց եւ օգնեց կիներուն:



"Շուտ տուն դարձաք", Ռագուէլի, աղջիկներուն հայրը զարմանքով հարցուց: Երբ աղջիկները բացատրեցին պատճառը, ան ըսաւ.



"Հոս բերեք այդ մարդը":



Մովսես ապրեցաւ
Ռագուելի հետ, որ
ճեղքո կը կոչուէր:
Յետոյ Մովսես
ամուսնացաւ
Ռագուելի
անդրանիկ
աղջկան հետ:

9



Եգիպտոսի մէջ, փառաւոն
մահացաւ: Աստուծոյ
ժողովուրդը, հրեաները,
տակաւին ծառաներ էին:

10



Անոնք հրեց
տանջանքներուն մէջ կը
ճմլուէին: Սաստիկ ձեռով
կ'աղօթէին Աստուծոյ
օգնութեան համար:

11



Աստուած լսեց
անոնց աղօթքները:

12



Մովսես լուր չուներ,
սակայն Աստուած կը ծրագրէր,
զիսք թագաւոր հռչակել,
օգնելու
գերի հրեաներ:

13



Քառասուն տարի անցան
Մովսեսի Եգիպտոսէն
հեռանալուն: Ան Ռագուելի
հովին էր: Բայց շատ կը
կարօտնար իր ժողովուրդին
Եգիպտոսի մէջ:

14

Օրին մեկը մօտերը
Մովսես թուփ մը նկատեց,
որ կրակ առած կ'այրեր:




15

Սակայն կրակը
թափով չէր այրեր:
Մովսես որոշեց գիտնալ
անոր պատճառը:




16

Երբ Մովսես կը մօտենար, Աստուած զինք
կանչեց թուփին մէջէն: "Մովսես": "Ես հոս
եմ" ըսաւ Մովսես "Շատ մի մօտենար", ըսաւ
Աստուած: "Ոտնամաններդ հանէ, որովհետեւ
հողը, որուն վրայ ես, սուրբ գետին է":



17

"Ես քեզի փառաւորնին պիտի դրկեմ, որ
իմ ժողովուրդս Եգիպտոսէն դուրս քերես",
ըսաւ Աստուած: Բայց Մովսես
կը վախնար հոն երթալ:



18

Ետքը Աստուած Մովսեսի ցոյց տուաւ
իր հզօր ուժը: Ան Մովսեսին
ցուալը օձի վերածեց:



19

Երբ Մովսես օձը վերցուց պոչէն, օձը անգամ
մը եւս ցուպ դարձաւ: Աստուած ուրիշ նշան
մըն ալ տուաւ:




20


"Կուրծքիդ դիր երկու ձեռքերդ": Ան հրամայեց: Մովսես այդպես ըրաւ: Իր ձեռքերը ճերմակ բորոտներու վերածուեցան:



Երբ սորեն կրկնեց, անոր ձեռքերը բժշկուեցան:



Տակաւին Մովսես արարկեց: "Ես լաւ չեմ խօսիր", ան ըսաւ Աստուծոյ: Աստուած զայրացաւ: "Ես Ահարոն քու եղբայրդ պիտի օգտագործեմ, որպէսզի քու ըսելիք խօսքերդ խօսի", ըսաւ ան:




Մովսես ճեղղոյին դարձաւ, հաւաքեց առարկաները եւ Եգիպտոս մեկնեցաւ:



Աստուած առաջնորդեց Մովսեսին եղբայրը Ահարոն, որպէսզի հանդիպի Մովսեսին, լեռան վրայ: Մովսես Ահարոնի պատմեց ամեն ինչ, որ Աստուած որոշած էր հրեայ ժողովուրդը դուրս հանելու Եգիպտոսէն:



Միասին անոնք լուրը փոխանցեցին հրեայ առաջնորդներուն: Երբ Մովսես ցոյց տուաւ նշանները ծերերուն: Անոնք գիտցան, որ Աստուած պիտի օգնէ իրենց: Միասին, խոնարհեցան պաշտելու:



Մովսես և Ահարոն գաղտնօրէն
գացին փառաւոնին. Աստուած կ'ըսէ.



27

"Ձգէ՛ իմ ժողովուրդս թող երթայ
ազատ", անոնք ըսին անոր:



28

"Ես չեմ ձգեր, որ իսրայել երթայ",
պատասխանեց փառաւոն: Ան չէր
ենթարկուէր Աստուծոյ:



29

Աստուած իր հզօր ուժը պիտի
օգտագործէր փոխելու համար
փառաւոնին միտքը:



30

Իշխանը հովիւ կը դառնայ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 2 - 5

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք
մեզ կը կոչէ: Մեզին պատիժը մահն է, սակայն Աստուած
այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,
որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար
պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը
բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը
պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար,
Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ
դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար
եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՛ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի
որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16